



## Ա. ԳՈԼԱՆՁՅԱՆ

# ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ<sup>\*</sup> ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ\*

8. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՅԱ  
ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՊԻՍԿՈ-  
ՊՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԴԱՄԱՆ ՀԱՄԱՐ  
(1715—1930 թ. թ.)

Տրանսիլվանիայի հայերի ավանդապահ ղանգամանքները ավելի քան երկու հարյուր տարի շարունակ համար ու երկար պայքար են մղել Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսի իշխանությունից գորս գալու, իրենց սեփական ազգային հայածես եպիսկոպոսությունը վերականգնելու և նրա միջոցով հայրենի ավանդությունները և հայոց լեզուն պահպանելու համար:

Տրանսիլվանիայի հայերի պատմության վաստակավոր ուսումնասիրող Հ. Գ. Գովրիկյանի կարծիքով, Ավստրիայի կայսր Կարոլոս Զ-ի 1733 թվականի օգոստոսի 11-ի հրովարտակով է միայն, որ Տրանսիլվանիայի հայերը անցել են լատին եպիսկոպոսի իրավասության տակ<sup>173</sup>: Սակայն ինչպես նշում են տրանսիլվանահայ պատմաբաններ և Լուքաշյանն ու Խ. Սոնկոտյանը, հիշ-

յալ 1733 թվականից շատ առաջ, Վրզարյանի մահից (1715 թ.) քիչ հետո, սկսած 1716 թվականից, Տրանսիլվանիայի Մարտոնֆի Գեորգ լատին եպիսկոպոսը, որի նստաղեղին Ալբա Յովիա քաղաքն էր, ինքնակոչ կերպով և առանց ոչ ոքի հանձնարարության, շարունակ խառնվել է հայերի եկեղեցական ներքին գործերին:

Լատին եպիսկոպոսը իբր կարծել է, թե Վրզարյան եպիսկոպոսը քանի որ իր ժամանակին իրավունք է ունեցել կառավարելու ամբողջ Տրանսիլվանիայի նաև ոչ հայ կաթոլիկ թեմը, ապա ինքը ևս այժմ իրավասություն ունի Տրանսիլվանիայի հայոց անհովիվ թեմը զեկավարելու, մինչև Հռոմի կողմից հայերի համար նոր հովի նշանակումը: Սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ Վրզարյանը լատին եպիսկոպոսի կողմից իրավասություն էր ստացել նրան հաջորդելու, քանի որ լատին առաջնորդը վտարվել էր բողոքականներից, այնինչ Մարտոնֆին ոչ ոքից չէր ստացել հանձնարարություն հայ թեմը զեկավարելու համար: Մյուս կողմից, Վրզարյանը հնարավորություն է ունեցել խոսելու կաթոլիկ հավատացյալների լեզվով, քանի որ նա տիրապետում էր հայերենից բացի նաև լատիներենին, հունգարեններին և գերմաներենին և ծանոթ էր նաև լատին եկեղեցու ծիսակա-

\* Շարունակած «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից, 1965 թվականի № Ա-ից և 1966 թվականի № Բ-ից, Գ-ից և Դ-ից:

<sup>173</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլվանիոյ հայոց մետրապոլիտը», էջ 98:

տարությանը, հակառակ սրան՝ Մարտոնֆին ոչ հայերեն գիտեր և ոչ էլ հայ ծեսին էր ծանոթ<sup>174</sup>:

Նշված 1733 թվականից առաջ, Տրանսիլվանիայի հայերի լատին եպիսկոպոսից կախման մեջ գտնվելու օգտին են խոսում նաև հետեւյալ անառարկելի փաստերու: Կարևոր է այն, որ Վենետիկից, գեռևս 1720 թվականին Գեռլա ուղևրվող Հովինան եպիսկոպոսը, իր հետ նաև հատուկ գրություններ էր տանում, ուղղված Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսին, որն ընդունելով Հովինանին, իրեն փոխանորդ կարգեց հայկական եկեղեցիների վրա և նույն ժամանակ նրան հրամայեց գրոշմի խորհուրդը կատարել մկրտությունից հետո և հոռմեական ձևով կառավարել նրանց<sup>175</sup>: Դարձյալ նույն Հովինան եպիսկոպոսը 1721 թվականին Մինիթար արքահոր գրած իր նամակում հայտնում էր, որ Հոռմի սուրբ ժողովը Տրանսիլվանիայի եպիսկոպոսին գրել էր այն մասին, որ «Ընդէ՛ր թուլ տաս որ Տէր Մինասն խարնակէ զպահան հայոց, ըստ սովորութեան եկեղեցւոյն իւրեանց զոր ունին, որովհետեւ են միացեալք հաւատօվ ընդ մեզ»: Լատին եպիսկոպոսը, ժողով գումարելով Տրանսիլվանիայի շորս հայկական եկեղեցիների մեծերի ներկայութեամբ, դատափետելով Տէր Մինասն, հետ վերցրեց նրանից այցարարի և տեղապահության գիրը և հեռացրեց նրան իր պաշտոնից<sup>176</sup>:

Այս հարցի շորջ կարևոր է նաև Բուլարեստի պետական արխիվում պահվող անտիպ մի փաստաթղթի սփռած լույսը: Այն 1726 թվականին Կարոլոս Զ կայսրի կողմից Գեռլա հայաքաղաքին տրված հրամանագրի հայերեն թարգմանությունն է, որից մի անգամ ևս երեսում է, որ այդ թվականից հիշյալ քաղաքի հայ եկեղեցին ենթարկվում էր Տրանսիլվանիայի եպիսկոպոսի իրավասությանը: Հրամանագրի ժողովածածում ասված էր Հետեւյալը: «Կարենայ այս հայոց աղքը քահանայ իրեն ունենալու ի մէջ այսմիկ քաղաքին, ի ներքոյ Արտէալի եպիսկոպոսին հնազանդութեանը (ընդգծումը մերն է—Ս. Ք.)»<sup>177</sup>:

<sup>174</sup> Chr. Lukacs, „Historia“, էջ 74, 135; Szongott Kristóf, Szamosújvár, szab. kir. város, Monografiája, 1700—1900, Szamosújvart, 1901, I. էջ 288—299.

<sup>175</sup> Հ. Պ. Տայան, «Մայր դիւան», էջ 22:

<sup>176</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>177</sup> Հիշյալ հրամանագրի արտագրությունը մեղ տրամադրեց Բուլարեստից պր. Տ. Մելքոնյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի հիման վրա կարելի է եղակացնել, որ Գովրիկյանի կողմից նշված թվականից գեռ 14 տարի առաջ, Տրանսիլվանիայի հայերը արգեն իսկ գտնվում էին լատին եպիսկոպոսից կախման մեջ: Մենք կարծում ենք, որ Գովրիկյանի հիշատակած 1733 թվականը վերաբերում է ոչ թե Տրանսիլվանիայի ամբողջ հայության կախվածությանը, որոնց վրա, ինչպես տեսանք, գեռ 1716 թվականին, Վրայարյանի մահից անմիջապես հետո, անկուզ կերպով իր թաթը տարածել էր Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, այլ միայն նդիսաբեթուպումի հայությանը, քանի որ 1731 թվականին է, որ նրանք բռնի կաթոլիկացվեցին և զարձյալ 1733 թվականին Կարոլոս Զ կայսրի կողմից հիշյալ քաղաքին տրված հրովարտակում է, որ հայերին հրամայվում է ենթարկվել հիշյալ եպիսկոպոսին: Փաստերը անվիճելի կերպով ապացուցում են, որ 1716 թվականից սկսած Տրանսիլվանիայի հայոց թեմի փաստական ղեկավարը դարձել էր լատին հունգարացի եպիսկոպոսը, իսկ Հոռմի Պրոպագանդան, ինչպես նաև Ավստրիայի կայսրը, որպես այցպիսին են նկատի ունեցել նրան:

Հետագա էջերում ցանկանում ենք կանգ առնել Տրանսիլվանիայի հայության կողմից ավելի քան երկու հարյուր տարի շարունակ իրենց ազգային եպիսկոպոսությունը վերականգնելու համար մղված հերոսական պայքարի հիշատակության արժանի առանձին դրվագների վրա, որոնք գեռևս անհրաժեշտ շափով ուշագրության շեն արժանացել ուսումնասիրողների կողմից:

Հայերի պայքարը իրենց իրավունքների վերականգնման համար դեռ շատ վաղուց է սկսվում: Այդ մասին Գովրիկյանը գրում է, որ «Թեպետ ելած են երբեմն երեկուի մարդիկ, որ նորոգել ուղած են հայ եպիսկոպոսությունը Դրանսիլվանիո մեջ, բայց մեկ կողմանն ներքին անմիաբանությունը, մյուս կողմանն գերազույն իշխանությանց չեղոք դիրք բռնելլ, բայց մանավանդ Հունգարիո կողմանն գրով, խոսքով ու գործով ցուցուցած սաստիկ հակառակությունն ու ընդդիմագրությունն<sup>178</sup> այն վիճակին հասցուցած են Դրանսիլվանիո Հայոց եկեղեցվույն իրեն, որ կղերը բավական ժամանակ այս բանիս դեմ, հուսահատ պատերազմ մը մղելեն ետև տեսնելով, թե ամեն բան անօգուտ է, ստիպ-

<sup>178</sup> Հայ ազգային եպիսկոպոսության վերականգնման դեմ ցուց տրված ընդդիմությունը պետք է նշել, որ հանդիս էր եկել Ավստրո-Հունգարիայի իշխող շրջանների մոտ:

վեցավ լոել և լաւին եպիսկոպոսին վերին իրավասությունն ընդունիլը<sup>179</sup>:

Հայերի ձախողանքին նախ և առաջ պատճառ եղավ նրանց ներքին անմիաբանությունը:

Վրդարյան եպիսկոպոսի մահից անմիջապես հետո, 1715 թվականի մայիսի 20-ին, Գյորգե Սենտ Խմբեում գումարված Տրանսիլվանիայի հայ մեծամեծների ընդհանուր ժողովը եպիսկոպոսի ընտրության հարցում շկարողացավ որևէ դրական որոշման հասնել:

Վրդարյան եպիսկոպոսը մահանալով 1715 թվականին, իր աթոռը կտակել էր կամենիցացի հայտնի մատենագիր Ստեփանոս Մտեփանյան Ռոշբային, սակայն հայերի անմիաբանության հետեւանքով, Ստեփանոս Ռոշբայի թեկնածության շուրջ հնարավոր շեղավ համաձայնություն գոյացնել և այս վերջինս մնաց միայն իրեն Տրանսիլվանիայի հայերի այցարար:

1719 թվականին Միիթար աբբահայրը Տրանսիլվանիա է ուղարկում իրեն այցարար Կարնեցի Խաչատուր վարդապետին, որի մասին սակայն ժողովրդի մեջ շփոթ կարծիքներ ծագեցին, ըստ որի ոմանք կարծեցին, թե նա ցանկություն ունի դառնալու Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոս: Միիթար աբբայի կենսագրության մեջ այս մասին գրված է, «Հավատալով հայազգի դրանսիլվանիացի Մինաս քահանայի մը խոսքերուն, ժողովրդյան մեկ մասը մտածեց ուրիշ վարդապետ մը զնել իրենց առաջնորդ, վախնալով, թե միաբանությանս ձեռքը կանցնի մշտնշենապես այն պաշտոնը: Միիթար, տեսնելով ժողովրդյան տարածայնությունը, Խաչատուր վարդապետին կանչեց Վենետիկ<sup>180</sup>: Հիշյալ Մինաս քահանան, պետք է կարծել, որ Եղիսաբեթուազուում գործող և եպիսկոպոսության իրեն թեկնածու իրեն համարող Մինաս Խնկանոսյանն էր և ոչ Գեղալյայի Մինաս Թորոսյանը, քանի որ վերջինին մասին Միիթարյան գործիշների գրած նամակներում նպաստավոր տողեր ենք դտնում, ինչ վերաբերում է Վենետիկի Միիթարյան միաբանության կողմից Տրանսիլվանիայի թեմի առաջնորդության մշտնշենական պաշտոնը իրեն սեփականացնելուն, ապա փաստերը հերքում են այդ: Սակայն եթե հետագա գեպքերի դասավորմամբ իսկապես Վենետիկի իրավասության տակ ան-

ցած լիներ Տրանսիլվանիայի հայոց թեմը, Միիթարյան ավանդապահ հայերը ուժացման ամենի ալիքներից կկարողանային փրկել պատվական մի գաղութի շառավիղներին:

Իրականում հայերի կախումը լատին ապիսկոպոսից ժամանակավոր պետք է լիներ, սակայն այդ «ժամանակավոր» կոչված շրջանը անեց ավելի քան երկու հարյուր տարի:

Հայ Գովրիկյանի, հայերը նույնիսկ որոշել են համակերպվել նրան, որին կուղարկի Հոռոմը, սակայն պապը այնպես էլ ոչ որի շուղարկեց:

Թեև պետք է նշել, որ պապը Վրդարյանի մահից հետո հատկապես շատ էր մտահոգված Տրանսիլվանիայի հայերի հակատարով, ինքնին հասկանալի է, որ նրա մտահոգված առարկան էին գեռես կաթոլիկության հարած հայերը: Ահա թե ինչո՞ւ «առարկական գահը», ինչպես գրում է Բատկարյանը, «ժամանակավոր ժամանակավորը այցելուն կամենիցացի հայության մասին կամաց առաջնորդ անարատ պահպանության վրա կհսկեին»<sup>181</sup>: Ահա այդ այցելուների թվում նշանավոր էր, ինչպես ասացինք, Լեհաստանից եկած Ստեփանոս Ռոշբայ հայ մատենագիրը: Սակայն սրանից հետո կլոյնի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսության իրավասությունը Տրանսիլվանիայի հայերի նկատմամբ հետզհետեւ թուլանում և աննշան է զանում, եթե շհաշվենք երբեմն Տրանսիլվանիայից հայկական ծեսով ձեռնադրվելու համար կլով զնացող հայ հոգուրականներին, թեև պետք է ասել, որ ձեռնադրվելու նպատակով հաճախ զնում էին նաև Հոռոմ, Վենետիկի ու Վիեննա: Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, որ մինչ այդ էլ, ինչպես նշվեց, կարևոր իրավասություններ ուներ տեղի հայերի նկատմամբ, այժմ Կարոլոս Զ կայսրը իր 1726 և 1733 թվականների հրովարտակներով երկու հայաքաղաքներին և հետևարար Տրանսիլվանիայի բոլոր հայերին պաշտոնապես զնում էր նույն եպիսկոպոսի գերիշխանության տակ, որպեսզի նա մի կողմից մոտիկից հսկի նշանց վրա և հոգ տանի հայերի կաթոլիկությունը անխախտ պահելու, իսկ մյուս կողմից էլ հայագավան հայերին իրենց ծեսով արարողություն կատարելը և կամ երկրում հաստատվելը թույլ շտալու համար: Եվ այսպես, 1726 թվականին Գեղալյի հայերին տրված հրովարտակի ԺԴ հոդվածում, բացի Արտելի եպիսկոպոսից հայերին կախման մեջ դնելուց, խստությամբ նախատեսվում էր

<sup>179</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլվանիոյ հայոց մետրապոլիս», էջ 98:

<sup>180</sup> Հ. Հ. Թորոսյան, «Վարք Միիթարյան», Վենետիկ, 1901 թ., էջ 345, 356:

<sup>181</sup> Հ. Գ. Բատկարյան, «Եկեղեցական պատմություն», էջ 384:

նաեւ, որ օԱրենելեան հայքին ի չորրորդում հասարակ Քավկեգոնի ժողովոյ զատապարտեցելըն Հեթետիկոսացն, այսինքն Թէոսկորոսի և այլոցն հետևողքն, ամենակին չի թողուն ներս մտնելու և զիւրեանք բառնալու, զարտ էթէ իրենցմանէ մեկը կամ մեկալը միայն պարզկընութեան պատճառաւն երկրին մէջ անցնելով և վասն այնորիկ քիշ ժամանակ այնտեղն ուշանալու պատահէր, այնքան ևս առաւել զարարողութիւն հաւատոյ, ոչ յայտնապէս և ոչ գաղտնի կամ ծածուկ իրենց թողուիք<sup>182</sup>:

Եղիսաբեթուպուսի հայերի բոնի կաթողիկացումից երկու տարի հետո, Կարուս Զկայսր 1733 թվականին նույն հայաքաղաքի հայերին տված իր հրամանագրով է՛լ ավելի էր ուժեղացնում հայերի կախվածությունը լատին եպիսկոպոսից: Հրամանագրի 4-րդ հոդվածում ասված էր. «Եվ վասնզի այս հայերը Տրանսիլվանիաի լատին եպիսկոպոսն կախում ունին ու պիտի ունենան՝ անոր համար եպիսկոպոսական իշխանության պարտականությունն ըլլա, որ հսկե, թե հոսմեական ուղղափառ հայ արարողությունն ըստ պատշաճի պահպանի. և արեւելան հայ հերձվածողները հանվանե Եվտիփեսի, Դիոսկորոսի և ուրիշներու դատապարտիանի արժանի վարդապետություններն այս ապդին հեռացին: Բայց ասկե, այս եպիսկոպոսն ոնց տանի, որ նվազ ծանոթ շմիցյալ հայ սստվածային պատշամունք մեր Տրանսիլվանիո իշխանության մէջ կատարվելու կամ վերոհիշշալ մուրության հետևողները՝ երկրին մէջ մտնելու թող շտրվին և իրենց հոն բնակիլը շներվի...»<sup>183</sup> (Ընդգծումներն մերն են—Ս. Գ.):

Մի քանի տարի անց հայոց ազգային եպիսկոպոսության հարցը կրկին է արձարձվում: Գեղացի Մինաս վարդապետ Թորոսյան-Զվածեղյանը փորձում է զառնալ Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսի: Մինասը կայսրի խոստվանահոր միջոցով ցանկանում էր հասնել իր նպատակին: Սակայն 1736 թվականի սեպտեմբերի 23-ին Եղիսաբեթուպուսի հայ մեծամեծներից 24 հոգի, ժողովրդապետ Մինաս վարդապետ ինկանույանի գլխավորությամբ, հատուկ զրություն գրեցին գեղացի Մինաս Թորոսյանի թեկնածության դեմ: Մի տարի անց, երբ կրկին հանդես եկավ Մինաս Թորոսյանի թեկնածության հարցը 1737 թվականի հու-

<sup>182</sup> Բուխարեստի պետական արխիվի վավերագիր, ընդօրինակություն Տ. Մելքոնյանի:

<sup>183</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայք Եղիսաբեթուպուսի», Ա, էջ 77-78:

լիսի 18-ի գրությամբ, Եղիսաբեթուպուլսի մեծամեծները գարձալ ինկանույանի գրը խավորությամբ դիմելով կայսրի խոստավանահորը, գրում էին, որ ինչպես իրենու նախորդ նամակով, այս անգամ ևս հաշտուում են, թե Անի թե թողնի Տեր Մինասին եպիսկոպոս մինել քանի որ նա իրենց ամենակին պետք չէ<sup>184</sup>:

Միիթար Աբրահամը ավագ աշակերտներից տրանսիլվանացի Հ. Թ. Հովհաննիսյանը (իմա՞ Մեղքացի) Վիեննայից 1737 թվականի հունիսի 15-ին գրած իր նամակում ուշադրավ տեղեկություններ է հաղորդում ինկանույանի մասին, որը մեծ կաշառքով փորձում էր տիրանալ Տրանսիլվանիայի հայոց առաջնորդական աթոռին, իսկ մյուս կողմից, Մինաս Թորոսյանն էլ սպասում էր նույն Վիեննայում կայսրի վերադարձին, որպեսզի նրանից ստանա եպիսկոպոսական թագու Ահա մի հատված հայոց առաջնորդության հարցը լուսաբանող այդ կարևոր փառաթղթից. «Մինչ եկն (պաշտպանվողի Տէր Մինասն) ի Վիեննա, պարծէր և ասէ՛, թէ աղաշայ Պետրոսն 240 000 զօլաթայ զնէ, որպէսզի ինքն լինիցի (այսինքն Տէր Մինասն ինկանուսեան) եպիսկոպոսի վերայ Պաշտպանվին, զի ինքեանք ոչ կամին ընդունիլ զգերապատուելի Տէր Մինասն կեռլացին եպիսկոպոսաւ....: ... իրակութիւնք գերապատուելի Տէր Մինասին արդէն իսկ կատարեցան, միայն սպասէ տիրումային, և գալստեան թագաւորին ի լուրսէմպուրքին, որպէսզի զնացեալ առաջի նորա՝ նընկալդի ի ձեռանէ նորա ի պարանոց իւր զմաւըն եպիսկոպոսական, և զթագն հայրապետուական, զոր տացէ Աստուած մեր...»<sup>185</sup>:

Այս անգամ, ինչպես տեսանք, Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսի հարցը վիճվեց ինկանույանի կողմից Վիեննայում կատարած իր բանակցությունների միջոցով: Սակայն այս հարցի ձախողման պատճառը պետք է կարծել, որ միայն անձնական չէր, այլև արդյունք էր երկու զորեղ հայաքաղաքների՝ Գեղացի և Եղիսաբեթուպուսի միջև սկսած կատաղի մրցակցության ի դիպ, պետք է նշել, որ գեղացի Մինաս Թորոսյանը եպիսկոպոս զանեալու զեպքում, դարձալ Գեղացի էր զանեալու հայ գաղութի առաջնորդանիստ կենարունը, ուրեմն հնարավոր էր, որ դրանով Եղիսաբեթուպուլիսը կորցներ իր մինչ այդ ունեցած իշխող գիրել Տրանսիլվանիայի մնացած հայարնակ վայրերի

<sup>184</sup> Նույն տեղում, էջ 223—229:

<sup>185</sup> Հ. Գ. Տայան, «Մայր դիման...», էջ 69:

զրա, դրան իբր պատասխան, Եղիսաբեթու-  
պոլիսն իր հերթին առաջ էր քայում իր թեկ-  
նածուին և եպիսկոպոսական Աթոռը իր մոտ  
հաստատելու միջոցով ուղում էր ոչ սիայն  
պահպանել իր իշխող դիրքը, այլև մասամբ  
ստվերի տակ թողնել օտարների կողմից ար-  
դեն իսկ հայոց մետրապոլիսը համարվող  
Գեղուան:

Անցնում է միայն երեք տարի և այս ձա-  
խողումից հետո, 1740 թվականին, կրկին  
օրակարգի հարց է դառնում հայ եպիսկոպո-  
սի ընտրության խնդիրը: Դարձյալ Տրան-  
սիլվանիայում գործող Մխիթարյան Հ. Թ.  
Հովհաննեսյանը 1740 թվականի մայիսի 1-ին  
կլուծից Մխիթար արքային իր գրած նամա-  
կում տեղեկացնում է, որ դեռ նոր պապի  
ընտրության մասին հայտնի չէ, և որ «Մինչև  
ցայժմ ոչ եղին զնոր մաճառ եպիսկոպոս ի  
վերայ Դրանսիլվանիոյ: Նմանապէս հայքն  
ասէին, թէ յայսմիկ ամսոց հաւաքեսցին ա-  
մենայն քահանալը հայոց, և ամենայն դա-  
տաւորք նոցա, և իշխանքի Կեռլայ առ ի առ-  
նել զժողով վասն իրաց իրեանց և վասն  
ընտրութեան հայոց եպիսկոպոսին»<sup>186</sup>: Հա-  
վանաբար հայերի կողմից այդպիսի մի քայ-  
լի դիմելու ամենահարմար ժամանակը՝ այդ  
է համարվել, քանի որ տվյալ շրջանում ոչ  
Հովհի պապն էր ընտրված և ոչ էլ Տրանսիլ-  
վանիայի նոր եպիսկոպոսն էր բազմել Աթո-  
ռին. Հետևաբար հայերը իրենց անկախ էին  
զգացել Դժբախտաբար մենք ոչինչ շփտենք  
այդ ժողովի կայանալու և նրա որոշումների  
մասին. սակայն մի բան պարզ է, որ հայերը  
որևէ դրական արդյունքի չեն կարողացել  
հասնել, քանի որ սրանից հետո էլ անխա-  
փան շարունակվել է լատին եպիսկոպոսի  
իշխանությունը նրանց նկատմամբ: Մենք  
ոչինչ շփտենք 1740 թվականին Գեռլայում  
գումարված ժողովի արդյունքների և եպիս-  
կոպոսական թեկնածուի անձնավորության  
մասին, սակայն պետք է կարծել, որ նույն  
Մինաս Թորոսյանն է դարձյալ առաջարկվել  
գեղացիների կողմից այդ պաշտոնին, և  
կրկին վերջացած պետք է լինի, ինչպես ա-  
սացինք, անհաջողությամբ: Մեր ասածի օգ-  
տին է խոսում հատկապես այն փաստը, որ  
հիշյալ գումարվելիք ժողովից միայն մեկ  
տարի անց՝ 1741 թվականին Մինաս Թորոս-  
յանը դարձյալ հեռացվում է իր պաշտոնից  
և նույնիսկ արտաքսվում քաղաքից: Հ. Թ.  
Հովհաննեսյանը Մխիթար արքանոր Բաշ-  
րալովից (իմա՞ Եղիսաբեթուպոլիս) 1741  
թվականի հոկտեմբերի 25-ին գրած նամա-  
կում այդ մասին ցավով տեղեկացնում էր.

<sup>186</sup> Հ. Դ. Տայան, «Մայր դիվան...», էջ 299—ԿԲ:

«... Զկնուայի Տէր Մինաս աւագերէցն իջու-  
ցեալ են ի պաշտօնէ, և արտաքսեալ ի քա-  
ղաքէն, որ ի քան վեց ամաց հետէ եղեալ  
էր աւագերէց անդ, և զայնքան բարերա-  
րութինս արարեալ էր քաղաքին: Ես այսո-  
ցիկ բնակից պատճառն է շքահպնայ մի Տէր  
Նիկօլ անուամբ...»<sup>187</sup>: Ինչպես անցյալում,  
այնպես էլ այժմ Մինաս Թորոսյանի պաշ-  
տոնազրկման և արտաքսման մեջ առաջնա-  
յին դեր պետք է որ ունեցած լիներ անկաս-  
կած Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը,  
որը ենելով իր շահերից, միշտ էլ դեմ է  
եղել հայ ազգային եպիսկոպոսության վե-  
րականգման գործին և իր ամրող կարելին  
արել է միշտ էլ վիժեցնելու հայերի ամեն  
տեսակի փորձերը: Բնիկ արանսիլվանացի  
հայ նշանավոր աշխարհագրագետ և Վենե-  
տիկի Մխիթարյան Միաբանության Արքա-  
հայր Հ. Ստեֆան Գյուլեր Ազոնցը նշում էր  
լատին եպիսկոպոսի հակա եկամուտների  
մասին, գրելով. «Ճարեկան հասք եպիսկո-  
պոսին անցան զՅ հաղարու, զոր ոմանք  
զ40 հազար ֆիորին հասուցանեն»<sup>188</sup>:

Սակայն այս բոլորով հանդերձ, հայերը  
չեն թուլացրել պայքարը: Ի վերջո 1758 թվա-  
կանին Մարիա Թերեզա կայսրութին դարձյալ  
Մինաս Թորոսյանին (Զվածեղյան) նշանա-  
կում է Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպո-  
սության թեկնածու, սակայն այս մնագմ էլ  
այն մերժվեց Եղիսաբեթուպոլիսի իորհրդա-  
կան Թեոդորոս Դանիելյան-Խնկանուայանի  
կողմից, որը դարձյալ ցանկանում էր իր  
եղբոր՝ Մինաս Խնկանուայանին տեսնել բազ-  
մած եպիսկոպոսական աթոռին: Այդ ան-  
միաբանության ժամանակ է, որ Ալբա Յու-  
լիայից եպիսկոպոսի կողմից մի քանի կա-  
նոնիկոսներ եկան և որոշեցին հարցը քննել  
Գեղուայի Ս. Սոլոմոն հայոց տաճարում,  
սակայն հայ կանայք, ինչպես մի տեղ ասա-  
ցինք, կարծելով, որ վերջիններս եկել են  
վերջ տալու նաև հայ ծեսին, քարելունելու  
սպառնալիքով եկեղեցուց ներս շթողեցին  
նրանց: Եվ այսպես դարձյալ ամեն ինչ վեր-  
ցացավ ապարդյուն: Պատմաբան և. Սոն-

<sup>187</sup> Նույն տեղում, էջ 98—ՃԵ:

<sup>188</sup> «Աշխարհագրութին լորից մասանց աշխարհի,  
մասն երկրորդ, Ելրոպա», Հատոր Դ, Վենետիկ, 1802 թ.,  
էջ 323:

Թե ինչքան պատկառելի էր տվյալ ժամանակաշրջա-  
նի համար այդ գումարը, կարելի է հետեցնել այն  
փաստից, որ Մարիա Թերեզա կայսրութին պրովի-  
կան պատերազմի հետեւով Եղիսաբեթուպոլիսի հա-  
յերից ինդրել էր պարտով տալու միայն 25 000 ֆիո-  
րին, որը հավասար էր 5000 ուկու (տե՛ս «Հայր յե-  
ղիսաբեթուպոլիս...», Ա, էջ 304—305):

կոտյանի կարծիքով, եթե հիշյալ Թեղողորոսը շխանգարեր, Գեղալայի հայ եպիսկոպոսությունը կանոնակի կիններ երկար ժամանակ։ Զնայած Մինաս Թորոսյանի անմեղությունը հետո ի հայտ եկավ բոլորի առաջ, սակայն այլևս նա եպիսկոպոս չօծվեց, այլ մնաց իրքն առաքելական տեղապահ և մինչև իր մահը վայելեց Մարիա Թերեզայի կողմից հայ եպիսկոպոսական սեղանի համար տրված 12 000 ֆլորինի գրամագիսի տոկոսները<sup>189</sup>

Այսպիսով Տրանսիլվանիայի հայերի կախվածությունը շարունակվեց դեռևս մնալ լատին եպիսկոպոսից։ Մարիա Թերեզա կայությունին, կրկնելով իր նախորդներին, 1758 թվականի նոյեմբերի 28-ին հայերին տված հրովարտակում գրեց, որ «Հայերը Դրանսիլվանիո հոռմիական ուղղափառ լատինածես եկեղեցական իշխանութենեն կկախվին ու պիտի կախվին...»<sup>190</sup>։

Հայերի համար շատ ոժվար էր հաշտվել իրենց ինքնուրուցն եպիսկոպոսության իրավունքը զրկվելու և հավիտենապես լատին եպիսկոպոսի գերիշխանության տակ մնալու ժանր պարտավորության հետ, քանի որ, ինչպես նշվեց, Վրզարյանը իր ժամանակին վարել էր նույնիսկ Տրանսիլվանիայի ոչ հայ կաթոլիկների եպիսկոպոսության պաշտոնը։

Ուստի հայերը, առանց հուսահատվելու, համառօքն մաքառելով իրենց սպառնացող ձուլման վտանգի դեմ, պայքարում են իրենց երբեմնի ունեցած իրավունքի վերականգնուման համար։ Մինաս Թորոսյանի մահից հետո, Գեղալայի հայերը, ինչպես երեսում է 1765 թվականի փետրվարի 8-ի քաղաքացին ժողովի արձանագրությունից, մեծամեծների բազմաթիվ ստորագրություններով դիմեցին Հոռմ, Տրանսիլվանիայի հայոց համար նոր եպիսկոպոս նշանակելու խնդրանքով։ Սակայն դարձյալ հայերի փորձերը անցան ապարդյուն։

Վերոհիշյալ 1765 թվականին հայերի կատարած դիմումից հետո փաստաթթերի շգոյնության հետևանքով, մեղ ոյինչ հայտնի չէ, թէ հայերը 85 տարի շարունակ, այսինքն մինչև 1848 թվականի հեղափոխությունը ինչպիսի փորձեր կատարեցին իրենց իրավունքները վերականգնելու համար։ Սակայն, անկասկած, Տրանսիլվանիայի հայերը նույն ժամանակաշրջանում ևս պետք է, որ շարունակած լինեն իրենց գերմարդկային ճիգերը գործադրել ազգային եպիսկոպոսության վե-

րականգնման համար։ Անշուշտ հետագայում նորահայտ վավերագրերի միջոցով մեզ պարզ կարող է դառնալ նաև այս շրջանին վերաբերող հայերի կատարած ապարդյուն փորձերի մասին։ Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը հետզիւտես ամրապնդելով իր ազգեցությունը հայերի վրա, սկսել էր խառնվել նրանց գրեթե բոլոր գործերին։ Այս առթիվ կարծում ենք, որ ավելորդ չ' լինի այստեղ մեջ ըերեւ Տրանսիլվանիայի հայերի ներքին գործերում լատին եպիսկոպոսի կողմից կատարված մի շարք միջամտումների վերաբերյալ մեկ քանի փաստեր։

Մի շարք տեղեկություններից երեսում է, որ հայ եկեղեցիների բոլոր պաշտոնյաները, սկսած քահանաներից մինչև անզամ տիրացուները և ժամկողները հայերի կողմից ընտրվելուց հետո պետք է, որ լատին եպիսկոպոսը հաստատեր<sup>191</sup>, եպիսկոպոսը իրավունք ուներ ընտրված երկու թեկնածու քահանաներից իր ցանկացածին հաստատել։ Այսպես, օրինակ, 1791 թվականի հոկտեմբերի 25-ին եպիսկոպոսը Եղիսարեթուպուսի հոգեոր հովիվ և վիճակի ավագերեց անվանեց երկրորդ տեղը ընտրված Անտոն Բաղրուպանյանին, փոխանակ հաստատելու Մարկեղոս Չիգիին, որին շատերն է, որ ուղում էին։ Սակայն դժուռները ամենեին չուզեցին Բաղրուպանյանին ճանաշել, ուստի հարկ եղավ, որ եպիսկոպոսը բոնության դիմի։ Միջամտեցին գավառապետը և զավառի զիմավոր դատավորը։ Այսպես երկար ընդդիմությունից հետո հասարակությունը ընդունեց ընտրված Բաղրուպանյանին, որին քիչ անց եպիսկոպոսը պատվով կանոնիկու անվանեց<sup>192</sup>։

Մենք տեսանք նաև լատին եպիսկոպոսի դերը 1731 թվականին արսորի սպառնալիքով հայերին բռնի կաթոլիկացներու առթիվ ժողով գումարելու և մի այլ առիթով՝ չ' նոր տոմարը ընդունել տալու կապակցությամբ։

Մի այլ փաստ վկայում է այն մասին, որ Հայոց եկեղեցական բոլոր եկամուտներից սկսած մինչև ամենահետին եկեղեցական սպառն ու զգիստը հայտնի են եղել լատին եպիսկոպոսին։ 1740 թվականին լատին եպիսկոպոսի փոխանորդ Կոստալլ Եղիսարեթուպուլիս է գնում, որպեսզի վերին իշխանության ծանուցի Հայ եկեղեցու վիճակի մասին։ Նրա կազմած ցուցակներում գրանցված են հոգեոր պաշտոնյաների եկամուտները, զանազան պաշտամունքների և ծիսական արարողությունների ժամանակ նրանց և ուշ-

<sup>189</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլվանիայի հայոց մետրապոլիս», էջ 96—98։

<sup>190</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայոց լեղիսարեթուպոլիս», Ա, էջ 209։

<sup>191</sup> Նույն տեղում, Գ, էջ 402—404։

<sup>192</sup> Նույն տեղում, էջ 431—432։

նալիք եկամտի որոշյալ սակերը և այն: Ցուցակներից մեկում տեղ են գրավել նաև ուկեցրած արծաթյա սպասները, ուսկեթել բանված եկեղեցական զգեստները և այն: Այս բոլորի թվումը ինչ խոսք որ ուշագրավ է և մեր տեղեկությունները կարող է հարստացնել ժամանակին օգտագործված սպասների և զգեստների մասին: Սակայն այստեղ դժվար չէ նշմարել նաև այն, որ ցուցակում ոչինչ չի մոռացվել, և անց են կացվել նույնիսկ հին ուրարները և անգամ պատառությած շուրջառները<sup>193</sup>: Այս ևս խոսում է լատին եպիսկոպոսից հայերի ուժեղ կախվածության մասին:

Եղած փաստերից երեսում է, որ հայերի մոտ հատկապես կաթոլիկական քարոզությունը ուժեղացնելու գործում լատին եպիսկոպոսը ղեկավար գեր է խաղացել: 1768 թվականի ուսություրքական պատերազմի պատճառով, երբ Մոլդովայից բազմաթիվ հայեր անցան Սեբէկից, Բայտայի եպիսկոպոսը Հովհաննես Գրեշունյանին հանձնարարեց, որ «Եղիսաբեթուպուլսոն եկեղեցականաց ձեռնտվությամբն անոնց հոգեկոր ափտույթները հոգա»<sup>194</sup>, նույնպես 1783 թվականի մայիսի 7-ի իր գորությամբ, Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, դիմելով Գեղար հայաքաղաքի հոգեկոր հովհելին և հոգեռորականությանը, նրանց ուշագրությունն է հրավիրում Սուչավայի հայերի վրա, որպեսզի միջոցներ ձեռնարկեն այդ հայերին ևս կաթոլիկացնելու համար<sup>195</sup>: Անշուշտ այս հորդորների հետեւանքով է, որ, ինչպես տեսանք, Սուչավա ուղարկվեցին կաթոլիկ հոգեռորականներ, որոնց աղքանուններից երեսում է, թե նրանք ծագումով պետք է որ Տրանսիլվանիայի հայերից լինեն:

Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը խառնվում և շարունակ միջամտում էր նաև հայկական կենտրոններում գործող դպրոցների գործերին: Բազմավայսակ պատմաբաններ, ուսույնական միջոցներու գործերին կարպում նկատում էր, որ լատին եպիսկոպոսը Միհիթարյաններին դպրոցներ բացելու իրավունք տալու հետ միասին, նա ուր եկեղեցվոյն թաթը կերկարեր Միհիթարյան դպրոցին վրա պայմանագրելով, որ «Ճեօք բանալի դպրոցը և ուսումնարանը այն գիւղաքաղաքի կարգեալ Գահերիցուն, կամ ժողովրդապետի տեղույն ենթարկեսցին միշտ և ամենակի յամանայնի վերականգնումը: Այսպիսի այս տեսանքը, այս ուղղությամբ երկար տարիների նրանց մղած պայքարը ապարդյուն էր անցել, իսկ երկրում, հատկապես հայկական կենտրոններից դուրս ցրված հայերի միստիկա մասը, դարձել էր լատինածին և զատապարտվել էր ձուկման: Ահա թե ինչո՞ւ հայերին իրենց աղքությունը և ամբողջականությունը՝ այս կամ այն կերպ պահպանելու համար մնացել էր միայն իրենց նախկին հայածին եպիսկոպոսության վերականգնումը: Սակայն, ինչպես տեսանք, այս ուղղությամբ երկար տարիների նրանց մղած պայքարը ապարդյուն էր անցել, իսկ երկրում, հատկապես հայկական կենտրոններից դուրս ցրված հայերի միստիկա մասը, դարձել էր լատինածին և զատապարտվել էր ձուկման: Ահա թե ինչո՞ւ աղքային եպիսկոպոսության վերականգնումը՝ մշացող հարց էր դարձել Տրանսիլվանիայի հայերի համար և ժամանակ առ ժամանակ նրանք ողի ի բոին մաքառում էին իրենց իրավունքների վերականգնման համար:

(Շարունակելի)

թեանն և ուղղաւորութեանն»: Միհիթարյանները, շրավականալով եպիսկոպոսի արտոնագրով, դիմում են Մարիս Թերեզա կայսրություն՝ նրան ևս հաստատել տալու համար իրենց վանատունը և հարկերից ազատ լինելու համար: Ալպոյանցնանը, սակայն, նկատում է, որ ինչպես երեսում է, «չէ հաջողած այս ծրագրը, վասնվի լատին կղերին ձգտումներուն համապատասխան չէր ան...»: «Այս գպրոցները կիորսնցնեին իրենց հայեցի նկարագրիը, որքան կիորանար զաղութիւն միշտ կաթոլիկությունը և լատին կղերը ձեռք կատարականակության գործը կամ անոր կմիջամտե իր ապազգայնացնող ողիուվը»<sup>196</sup>:

Ահա այս էր Տրանսիլվանիայի հայերի գրությունը Ժի դարի վերջում: Հայերի մղած այս երկարատև ու համառ պայքարը իրենց աղքային ինքնուրույն եպիսկոպոսությունը վերականգնելու համար, հիմնականում արդյունք էր այն բանի, որ հայերը Տրանսիլվանիայում շնանշվեցին իրենց հայագիւներ և ընդունված երեք մեծ աղքությունների նման ուրույն աղքություն կազմելու իրավունք շունեցան: Աղքերին բռնի ձուլող կայսերական այդ խառնարանում, հակառակ հայերի դիմումներին, կայսրը ի վերջու 1781 թվականին մերժեց նրանց պահանջը, պատասխանելով: Որ «... չուվէյ օր ալ շատ Արտեալին մէջ նաձիօնալիկմուշ գտվի»<sup>197</sup>, այսինքն, որ ինքը չի ցանկանում Տրանսիլվանիայում շատ աղելի աղքություններ գտնվեն: Ահա թե ինչո՞ւ հայերին իրենց աղքությունը և ամբողջականությունը՝ այս կամ այն կերպ պահպանելու համար մնացել էր միայն իրենց նախկին հայածին եպիսկոպոսության վերականգնումը: Սակայն, ինչպես տեսանք, այս ուղղությամբ երկար տարիների նրանց մղած պայքարը ապարդյուն էր անցել, հատկապես հայկական կենտրոններից դուրս ցրված հայերի միստիկա մասը, դարձել էր լատինածին և զատապարտվել էր ձուկման: Ահա թե ինչո՞ւ աղքային եպիսկոպոսության վերականգնումը՝ մշացող հարց էր դարձել Տրանսիլվանիայի հայերի համար և ժամանակ առ ժամանակ նրանք ողի ի բոին մաքառում էին իրենց իրավունքների վերականգնման համար:

<sup>193</sup> Հ. Գ. Գովեիկյան, «Հայեր յեղիսաբեթուպուլիս», Բ, էջ 30 և այլն:

<sup>194</sup> Նույն տեղում, Գ, էջ 430:

<sup>195</sup> Chr. Lucaksi, նշված աշխատութեանն, այցարարու-

<sup>196</sup> Ա. Ալպոյանյան, «Պատմություն հայ գպրոցի, Ա, Կահերե, 1946, էջ 593; Հմմտ. Հ. Դ. Տայան, «Մայր դիման...», էջ 157—158, 183:

<sup>197</sup> Հ. Գ. Գովեիկյան, «Հայեր յեղիսաբեթուպուլիս», Բ, էջ 235: